



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ  
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅՅԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3

1934

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԴՐՕ

## ՄԻ ՀԱՏԻԱԾ ՅՈՒՇԵՐԻՑ\*

I

ԶՄՐԿ, ԵՐԵՒԱՆ ԶԱՆ.

1905 թ. մայիսին ահարեկեց Բազուի եւ շրջանի քաղաքայեա Նակաչիձէն: Բազուի Կենտրոնական Կոմիտէի վճռով, ես հեռացայ Թիֆլիս. Բազուում մնալս համարուում էր վտանգաւոր:

Ինձ հետ էր եւ ընկերս՝ Կոսն: Կենտր. Կոմիտէն սաստիկ դժգոհ էր նրանից, որովհետեւ նա, ահարեկման վճռական վայրկեանին, նշանակեա՞ծ տեղում չէր երեւացել: Նոյնիսկ նրան ուզում էին արտաքսել մեր զինուորական շարքերից, բայց իմ միջնորդութեամբ եւ խնդրանքով՝ զիջող եղան եւ թոյլ տւին, որ ինձ հետ միասին մեկնի Թիֆլիս:

Առաւօտեան ժամը 7-ի մօտերը հասանք Թիֆլիսի կայարանը, որտեղից անմիջապէս զնացինք ներկայանալու Բժ. Յ. Տէր-Դաւթեանին, որ, իբրեւ Հ.Յ.Դ. Բիւրօի անդամ, որոշելու էր մեր անելիքը:

Դրան զանգի վրա դուրս եկաւ բժշկի մայրը, մի փոքր շարած ու զարմացած զննեց մեզ ու հարցրեց.

\*) Այս հատածով չի սպառուում մեր խոստումը Դրօի յուշերի հրատարակութեան մասին: Ընդհակառակը, մենք վստահ ենք, թէ պիտի կարողանանք «վեմ»-ի էջերում տալ Դրօի ընդարձակ յուշերն ու տեսութիւնները մեր մերձաւոր անցեալի գէպերի եւ երեւոյթների մասին: ԽՄԲ.

— Ո՞ւր էք ուզում :

— Բժշկին :

— Էս ժամին բժիշկ կը լինի, յետո՛յ եկէք, կարճ պատասխանեց նա եւ պատրաստուամ էր դուռը փակել երեսներիս, բայց մենք այնքան էլ հեշտութեամբ տեղի տուողը չէինք: Առանց մի խօսքի վերցրինք մեր կապոյցները եւ մտանք ներս :

— Մայրի՛կ, մենք նրա հետ դորձ ունենք, ասացի ես եւ յանձնեցի Բագուի Կենտրոն. Կոմիտէի ծածկազիր նամակը բժշկին :

Մայրիկը մեղմացաւ : Կարգազրեց, որ մեր իրերը դնենք նախասենեակում եւ մտնենք բժշկի ընդունարանը :

Այստեղ սպասեցինք ժամը ութից—ինը : Անշուշտ մայրիկը չէր կամեցել խանգարել որդու քունը եւ չէր զարթեցրել : Ո՞վ դիտէ՞՝ գիշերը ո՞ր ժամին էր վերադարձել տուն կուսակցական ժողովից :

Ժամը իննը կը լինէր, երբ մայրիկը նորից մտաւ ներս եւ մեզ հրաւիրեց սեղանատուն : Քիչ յետոյ եկաւ եւ բժիշկը : Այստեղ առաջին անգամ ծանօթացա՜ք մեր սիրելի բժշկի հետ, որի անուն մինչեւ այդ շատ էի լսել :

Նախաճաշից յետոյ, բժիշկը ուղղեց մեզ մի քանի կարճ հարցումներ եւ ուզեց իմանալ, թէ՛ ինչի՞ կարիք ունենք : Բագուի Կենտրոն. Կոմիտէն գրել էր նրան, որ մեզ ցոյց տայ բարոյական եւ նիւթական ամէն աջակցութիւն, բայց առանց դրան էլ նա մեզանից ոչինչ չէր ինայի : Կո՞ն յայտնեց, թէ ինքը ցանկանում է մնալ Թիֆլիսում, ուր ապրում էր իր մայրը, իսկ ես ուզում էի դնալ Նրեւան : Բժիշկը երկուսիս էլ ուշադրութեամբ լսելուց յետոյ, դարձաւ ինձ.

— Լա՛ւ մտածիր, գուցէ քեզ համար էլ այստեղ մնալը աւելի լաւ է : Վստահ եղիր, որ պէտք եղած ամէն աջակցութիւն կը ստանաս :

— Ո՛չ, առարկեցի ես, անպատճա՛ռ ուզում եմ գնալ Նրեւան :

Ինձ Նրեւանը գրաւում էր երկու պատճառով. նախ՝ այնտեղ էլ արդէն սկսել էին հայ—թրքական ընդհարումները. երկրորդ՝ Նրեւանում էին իմ երկու ամենամտերիմ ընկերները՝ Գաշնակցական Խէչօն եւ Փառակեցի Մկրտիչը, որոնց ձեռքի տակ ես կարող էի օգտակար լինել Նրեւանի շրջանի ինքնապաշտպանութեան գործին :

Բժիշկը ուշադրութեամբ լսեց իմ պատճառարանութիւնները :

— Լա՛ւ, ասաց նա եւ անմիջապէս մի տոմս գրեց : Ա՛ռ այս

տոմար եւ զնա՛ ընկ. Մանասի<sup>\*)</sup> մօտ, նա ամէն բան կը կարգադրէ:

Յետոյ, մի պահ կանգ առաւ, մտածեց ու նորից դարձաւ ի՛նձ:

— Իսկ ճանապարհածախս ունի՞ս:

Այո՛, ճանապարհածախս Բաղուժ ստացել էի բաւարար չափով:

Ընկերս զնաց մօր մօտ, իսկ ես բժշկի զբաժ տոմար ձեռքիս՝ զնայի փնտռելու ընկ. Մանասին: Նրան էլ առաջին անգամը պիտի հանդիպէի: Բժշկի տւած ցուցմունքներով հեշտութեամբ դտայ եւ յանձնեցի տոմար: Կարճ հարցուփորձից յետոյ, նա էլ բանաւոր հաճարեց ցանկութիւնս եւ ասաց.

— Կատարելապէս հասկանում եմ քեզ: Լաւ ես անում, որ ուղում ես զնալ Երեւան: Իսկ ի՞նչ զէնք ունես մօտդ:

— Մի պարարելում ատրճանակ, պատասխանեցի ես:

Մանասն անմիջապէս ինձ կտօք նստեցրեց եւ տարաւ Վերիաճիւղի միջնակարգ փողոցի վրա դանւող մի համեստ ճաշարան: Ներս մտնելուն պէս իր մօտը կանչեց արտաքինով խիստ պարզ հազնւած մի մարդ եւ ականջին ինչ որ բաներ փոխաց: Ճաշարանից վերադարձանք Մանասի բնակարանը, իսկ քիչ անցած այնտեղ եկաւ նաև վերոյիշեալ մարդը եւ Մանասին յանձնեց մի փոքրիկ արկղ: Մանասը բաց արաւ եւ միջից հանեց մի բոլորովին նոր մաուզէր ատրճանակ: Ատրճանակը յանձնեց ինձ եւ ասաց.

— Սա Թիֆլիսի Կենտրոնական Կոնսէի կողմից նւէր եմ տալիս քեզ: Մօտիդ պարարելումը կը յանձնես Երեւանի զինական մարմինն:

Կարող էք երեւակայել, թէ ի՛նչ ուրախութիւն պատճառեց ինձ Մանասի նւէրը, մանաւանդ այդպիսի ջերմ զգացմունքով տրւած:

Թիֆլիսում երկար չմնացի. անմիջապէս մեկնեցի Երեւան: Արդէն քաղաքում եւ ամբողջ նահանգում միջնորոտը լարւած էր: Ճանապարհները դարձել էին վտանգաւոր: Թուրքերն ու հայերը իրարու դէմ էին կանգնած, իրրեւ երկու թշնամի բանակներ: Մանաւանդ, յարարերութիւնները սրւել էին Նախիջևանի ընդհարումներից յետոյ:

Դաշնակցական ինքնապաշտպանութեան ընդունեց արտակարգ ուրախութեամբ

\*) Սարգիս Մամասեան, դաշնակցական յայտնի գործիչ. հայ-քրքական ընդհարումների ժամանակ նրա ձեռին էր կենտրոնացած զէնքի գործը: Հայաստանի Հանրապետութեան օրով՝ երբին գործոց նախարարի օգնական: 1920 թ-ին սպանւեց բոլշևիկների ձեռքով, Բագու գերեզուց յետոյ:

ու անմիջապէս ներկայացրեց Գալուստ Ալոյեանին\*) եւ վերջինիս գիտութեամբ ու համաձայնութեամբ ինձ առաւ իր տրամադրութեան տակ՝ նոյն օրն իսկ նշանակելով թուրքիկ խմբի խմբապետ: Այդ խումբը բաղկացած էր եօթը հոգուց: Ես եղայ ութերորդը: Մեր մշտական հաւաքատեղին Ջոկի ծանօթ կաթնատան յետեւի սենեակն էր, ոստիկանատան կից:

Նախ քան գործի անցնելը ես խնդրեցի երկու օրով արձակուրդ: Մէկ տարի էր որ դուրս էի եկել ծննդավայրիցս, ուզում էի տեսնել իդդիբը, ծնողներին, ազգականներին ու բարեկամներին: Սէջօն ուրախութեամբ թոյլ տւեց. ես վարձեցի մեր դաշնակցական կառապան Միխօի կառքը եւ մեկնեցի դիշերով: Ես վտանգւած էի եւ չէի ուզում լուսով մտնել Իդդիբ:

Մուրմալուն միակ վայրն էր, ուր հայ-թրքական բարի հարեւանական յարաբերութիւնները խախտւած չէին: Ծրջանը խաղաղ էր եւ ճամբորդութիւնը ապահով:

Առաւօտեան դէմ հասայ մեր տուն եւ ամբողջ օր տնից դուրս չեկայ: Երեկոյեան մօտս եկաւ Գեորգանը\*\*) եւ յայտնեց, որ Երեւանում սկսւել են հայ-թրքական ընդհարումներ եւ թուրքերը բաւական շատ հայեր են կոտորել: Լուրը չափազանց ծանր տպաւորութիւն թողեց վրաս: Ես ինձ դզում էի յանցաւոր. չէ՞ որ թուրքիկ խմբի պետ էի նշանակւած եւ ընդհարման ժամանակ պարտականութիւններ ունէի կատարելիք:

Այլեւս երկար մտածելու ժամանակը չէր: Հակառակ ծնողներին թախանձանքին, որ դէթ մի օր էլ մնամ իրենց հետ, նոյն դիշերն իսկ ճանապարհ ընկայ Երեւան: Գեորգանը հետս գրեց իդդիբի Գասպարենց Մելիքսեթին, որի հետ մեկնեցինք կառքով, հայկական դիւղերի վրայով:

Դեռ լոյսը չէր բացւել, որ հասանք Երեւան: Ես անմիջապէս վազեցի Սէջօնեց տունը: Նա ապրում էր Սէջումեանենց բնակարանում, Յարսիկի թէ Բեհրութեան փողոցում: Ներս մտնելով՝ ապշած տեսայ, որ Սէջօն կիսահանւած նստած հաց է ուտում: Ինձ որ տեսաւ, բարձր պոռայ.

— Հը՛, խաթաքեա՛ր, եկա՞ր, դէ՛, արի հաց ուտենք...

\*) Գալուստ Ալոյեան, կուսակցական անունով թորոս, հին դաշնակցական գործիչ ու զինագործ: Սպանեց չէրաների ձեռքով, 1914 թ. աւաւը, վաճից կովկաս անցնելիս:

\*\*) Իդդիբի դաշնակցական ընկերներից:

Սէջօի մայրիկը, որ մեր բոլորիս մայրիկն էր, ասաց.

— Սէջօս աշխարհը շլակել ա, ման ա դալիս. առաւօտուց հաց չի կերել, հէնց նոր եկաւ:

Ես Սէջօին երբեք այդքան ընկճւած ու մտադրաղ չէի տեսել: Ով նրան ճանաչում էր, գիտէր, որ ինչքան դժւար պայմանների մէջ էլ դռնէր, միշտ կը պահէր հողեկան արիութիւնը եւ իր մշտադրւարթ եւ օրհնեալ կատակներով կուրախացնէր ամենքին: Այժմ ընկել էր խորունկ տխրութեան մէջ եւ երեսին ժպտ չէր երեւում:

— Հը՛, ի՞նչ կայ, Սէջօ, հարցրի ես:

Նա դադարեց ուտել: Սաստիկ յուզւած էր: Մարմնի բոլոր ջիւղերը լարւած էին: Աչքերը խոժոռոտ՝ երկու ձեռքի վրա յենեց եւ թողեց ճաշի սեղանը:

Էլ ի՞նչ պիտի լինի, պատասխանեց նա դառնութեամբ, հալա որ ջարդեցին, մնացածը յետոյ կը պատմեմ:

Ու ամբողջ երկարութեամբ ձգեց թախտի վրա, երկու ձեռքերը երկարացրեց մարմնի երկու կողմը, ոտքերով հանեց կօշիկներն ու մի կողմ շարտեց անվութօրէն եւ մայրիկին խնդրեց, որ մի բանով ծածկէ: Մայրը շատ խնդրեց, որ շորերն էլ հանէ, բայց նա չը լսեց ու այդպէս էլ քնեց:

Ես անցայ հարեան սենեակը: Այնտեղ էլ նոյնպէս շորերը հագին, քնած էր Փառակեցի Մկրտիչը: Սէջօից ես դեռ քաշում էի, բայց Մկրտիչի մօտ շատ ազատ էի պահում ինձ: Ես նրան հրեցի ու կանչեցի.

— Է՛, դոչի Աղամալով, վե՛ր կաց: Մի պատմիր տեսնենք ի՞նչ է պատահել:

Մկրտիչի պատմութիւնից պարզեց, որ քաղաքի թուրքերը, յանկարծակիի բերելով՝ յարձակել են հայերի վրա եւ 20-25 հայեր են սպասել, որ կենտր. Կոմիտէն գէնքի պակասութեան պատճառով սարսափի մասնւած՝ գլուխը կորցրել է եւ հրահանգել է առ այժմ զզոյշ մնալ, ընդհարումների ստիթ չտալ եւ պատրաստել: Ծանր դրութիւն էր ստեղծւել քաղաքում: Թուրքերը առաջին յաջողութիւնից երես առած՝ ամէն բոպէ կարող էին նոր յարձակումներ գործել ու նոր ջարդ առաջ բերել:

Ես էլ պանկեցի Մկրտիչի կողքին եւ անընդհատ հարցեր էի թափում նրա գլխին, իսկ նա, կէս-քուն, կէս-արթուն, քթի տակից ինչ որ բաներ էր մըթմըթում: Նրա այդ մըթմըթոցից ոչինչ չհասկցայ:

Առաւօտեան երբ զարթնեցինք, Սէջօն արդէն տանը չէր: Գնացինք Ձոզի կաթնատունը, այնտեղ էլ չկար: Ձանիբեզեան Հայկօից

իմացանք, որ գնացել է ման գալու քաղաքի դիրքերը եւ նոր կարգադրութիւններ անելու :

Ճաշի մօտերը Խէչօն վերադարձաւ կաթնատուն : Նրա հետ էին եւ իր երկու թիկնապահները՝ Կոլոս Շահէնը եւ մի էջմիածնացի տղայ, որի անունը մոռացել եմ : Անցանք յետեւի սենեակը : Խէչօն հրամայեց Շահէնին կանգնել դրան առաջ եւ ոչ ոքի ներս չթողնել, իսկ ինքը նստեց սեղանի մօտ չիբուխը լեցրեց մախոռկայով\*) ու սկսեց ծխել : Յետոյ ոտքի ելաւ ու սկսեց ման գալ՝ փստացնելով չիբուխը եւ ծխի քուլաները դուրս փչելով բերնի երկու կողմերից : Ես ու Մըկըրտիչը լուս հետեւում էինք նրա շարժումներին : Խօնչ էր խռովում նրա հոգին : Ինչո՞ւ էր այդքան անհանդիստ ու մտադրաղ :

Խէչօն մէկէն ընդհատեց իր դրօսանքը, կանգ առաւ մեր առջեւ եւ սկսեց նկարագրել ստեղծւած դրութիւնը :

— Նախիջեւանն ու Շարուրը շատ ծանր վիճակի են մատնւած, կարող են ջարդւել, Դարայադեալը ենթակայ է թարաքեամայի\*\*) անմիջական հարւածներին : Սուրմալուի մի բունն հայութիւնն էլ բնաջրնջման վտանգի տակ աս : Երէկւայ ջարդը սիրտ պիտի տայ Երեւանի թրքութեան, իսկ հայերի ողին պիտի բնկնի : Կուրը շատ ասեծ իմ դլխի բանը չէ էս դործը : Բինդեազ Կենտրոնական Կոմիտէի մէջ էլ էն մարդը չկայ, որ այս չափի զինւորական դործեր ըմբռնի ու վարէ : Փամիուշտի ու գէնքի տեսակէտից էլ մենք շատ խեղճ ենք, մինչ թրքութիւնը զինւած աս ու զինւում է կառավարութեան օժանդակութեամբ : Ասում են՝ Դումանը պիտի դայ. ա՛խ, ուր աս մի գտր : Նա շատ նազ անել չի գիտի, քեաֆուր օղլին՝ կնանիքը ծախել կը տայ, աթապնի եանդար, փափախները ծախել կը տայ ու էս շուն սրդի հարուստներին կը ստիպէ գէնք առնել : Եւ, վերջապէս ամէն մէկին իր տեղը կը դնի եւ իր ճամբէն ցոյց կը տայ :

Իր ճառը վերջացնելուց յետոյ, Խէչօն շարունակեց փստացնել չիբուխը : Եւ աւելացրեց .

— Բէնամօսս եղանք. Երեւանի մէջ էլ թուրքերը մեզ աւին : Կենտրոնական Կոմիտէն էլ մի եանից դատարէզատը քցել աս, թէ՛ ամէն զգուշական միջոց ձեռք առ, որ նոր ընդհարումները առիթ չստեղծւի, թէ՛ ընդհարման պատասխանատուն դու ես, թէ՛ առիթներ ստեղծողը ամենախիստ պատժի կենթարկւի : Չեմ իմանում՝ ի՞նչ անեմ :

\*) Ծխախոտի հասարակ տեսակը :

\*\*) Բռչուր քուրքեր :

Ապա հրամայեց Մկրտչին, որ անմիջական հսկողութեան տակ առնէ եւ ղեկավարէ Շնթաղի զիրքերը, որտեղից կարող էին թըրքական կառաղի յարձակումներ տեղի ունենալ:

— Իսկ ես, վերջացրեց նա, անձամբ եղել եմ միւս շրջանները, նշանակել եմ շրջանապետներ եւ տեւի հարկաւոր հրահանգները:

Իմ թոռուցիկ խմբին էլ, որի անդամները թիւը երկու օրուայ մէջ հասել էր 12-ի, հրամայեց բաժանուել երկու մասի, կէսը կեդրոնացնել Ամիրեանի քարվանսարայում, բազարի զիմացը, որտեղ ջարդուել էին հայերը, իսկ միւս կէսը միշտ պատրաստ պահել կաթնատան յետեւի սենեակում:

Ես իմ թոռուցիկ խմբի անդամների մի մասին ղեռ չէի ճանաչում: Նախ՝ բոլորին հաւաքեցի Թագա եկեղեցու բակը. եօթ հոգուն Քիւրդ Սէջօի ղլխաւորութեամբ ուղարկեցի Ամիրեանի քարվանսարան, միւս մասին էլ հրամայեցի սպասել Զօկի կաթնատան յետեւի սենեակում: Ինքս էլ, Սէջօի կարգադրութեամբ, զնացի նրա մօտ:

Այստեղ նորից ու նորից խօսեցինք տեղի ունեցած հայկական ջարդի, նրա թողած ազդեցութեան, ունենալիք հետեւանքների մասին: Երեւանի ժողովուրդը շատ էր աղւել ղէպքից: Ամէնքի մէջ տիրում էր յուսալքում: Երեւանցիք որ զուցէ ամենից լաւ ծանօթ էին Դաշնակցութեան մարտիկների կեանքին ու քաջագործութիւններին, որ ա՛յնքան մեծ յոյսեր էին դրել Դաշնակցութեան վրա, այժմ շքմել ու շարել էին: Չէին հասկանում, թէ ի՞նչպէս պատահեց կոտորածը, թէ ինչո՞ւ լուռ եւ անզորձ էր Դաշնակցութիւնը, ինչո՞ւ հարւածին չպատասխանեց հակահարւածով:

Հողերնական այս ծանր վիճակը ամենից խորը զգում էինք մենք՝ դաշնակցական մարտիկներս: Սէջօի վշտալիւր արտայայտութիւնը, թէ՛ «նամուս չմնաց, պէ՛տք է այս անարգանքը մաքրենք», ամբողջապէս արտայայտում էր եւ մեր տրամադրութիւնները:

Այո՛՝ կարելի էր կուլ տալ հասցւած անպատուութիւնը:

Միւս կողմից՝ պարզ էր, որ առաջին յաջողութիւնից երես առաձ թշնամին տեղը հանդիստ չպիտի նստէր: Արդէն նշանները երեւում էին. թուրքերը հեւ ի հեւ պատրաստուում էին նոր յարձակման համար: Եւ բնական է, որ օգուէին հայերի ընկճւած տրամադրութիւնից եւ արագացնէին հարւածը: Մի նոր յաջող հարւած եւս, եւ հայերի համար կը ստեղծէր անտանելի կացութիւն: Յաղթական թուրքը ղլուխ կը բարձրացնէր եւ քաղաքից դուրս, հայ-թըրքական ընդհարումների հրդեհը կը տարածէր ամբողջ նահանգում:

Ես տեսնում էի, որ այս մտքերը տանջում էին եւ Սէջօին ու

Մկրտչին: Ինքնապաշտպանութեան գործի ղեկավար Սէջօի եւ նրա օգնական Մկրտչի վրա էր ընկնում կոտորածի եւ ծագելիք բար-  
զութիւնների անմիջական պատասխանատուութիւնը: Սէջօի մէջ մի  
կողմից խօսում էր լաւագոյն մարտիկի թասիբը, միւս կողմից նրան  
խորապէս յուզում էր ժողովրդի ապահովութեան հոգար: Վերջա-  
պէս, նրան անհանդատացնում էր եւ Դումանի գալու լուրը. չէ՞ որ  
ինքը Դումանի լաւագոյն զինւորներից ու նրան պաշտողներից էր.  
Ի՞նչ երեսով պիտի ներկայանար նրան:

— Հէ՛յ, մէրդ մեռնի, Սէջօ՛, ի՞նչ երեսով պիտի երեւաս Դու-  
մանին, կրկնում էր նա անընդհատ:

Դրութիւնն անտանելի էր ոչ միայն Սէջօի, այլ եւ Երեւանի  
հայրութեան համար: Կենտրոնական Կոմիտէն կարգադրել էր խոհեմ  
լինել ու սպասել, բայց չէ՞ որ թշնամին չէր սպասի: Կուրի մէջ  
յաղթութիւնը մեծ չափով ապահովւած է նրան, ով իր ձեռքը կառ-  
նէ նախաձեռնութիւնը: Բոլոր երեւոյթները ցոյց էին տալիս, թէ  
սպասելու անմիա քաղաքականութիւնը կարող էր լինել կորստարեր  
հայերի համար: Ընդհակառակը, հակահարւածը մեր կողմից, յա-  
ջողութեան դէպքում, հիմնովին պիտի փոխէր դրութիւնը եւ հա-  
յերին պիտի զնէր աւելի նպաստաւոր վիճակում: Պատերազմը յայ-  
տարարել էր թշնամին. մենք պաշտպանողի դերում էինք: Լաւա-  
գոյն պաշտպանութիւնը յարձակումն էր:

Այսպէս մտածում էինք մենք Մկրտչի հետ: Երկար ու բազմա-  
կողմանի քննելով ստեղծւած կացութիւնը, մենք որոշեցինք առա-  
ջարկել Սէջօին մեր ձեռքը առնել նախաձեռնութիւնը:

— Վա՛յ, խաթաքեար քէօփողիք, ասաց նա, ես էլ ամբողջ օրը  
դրա մասին եմ մտածում: Խոթ թուրքերը մեր գլխին ասլան չղա-  
ռա՛ն: Բէնամուս սպրեւն էլ մի բան չէ. որտեղ կտրւի կապը ... ու  
վերջացրեց մի սարսափելի հայհոյանքով:

Ապա Սէջօն պինդ փակեց սենեակի դուռը, եւ երեքով նստանք  
խորհրդակցելու դրութեան եւ մեր անելիքների մասին: Ամենից ա-  
ռաջ ստուգեցինք մեր տրամադրութեան տակ գտնւած զէնքի քա-  
նակը. պարզեց, որ մեր ունեցած մոսին հրացանների թիւը հա-  
րիւրը չի անցնում. ունէինք նաեւ յիսունի չափ տորճանակներ, մեծ  
մասով մատղէր: Շատ չէր այդ, բայց եւ այնպէս գործ կարելի  
էր տեսնել:

Սէջօն կանչել տեց մեր պահեստապետ Զանիրէկեան Հայկին:  
Սա թույլալով ներս ընկաւ եւ բերեց մի ուրախ լուր. հէնց նոյն օրը  
Ալեքսանդրապոլից ստացել էր 15 մոսին հրացան եւ 4000 փամ-  
փուշտ:

— Ի՞նչ մոտիւններ են, հա՛, բոլորովին նոր, դեռ կաքաւի ձէն չեն լսել, շողակրատում էր Հայկը:

— Հա՛ւ, լաւ, խաթարեար քեօփօղլի, ընդմիջեց խէչօն, էդ մոտիւնները մարդու չես տայ եւ կը պահես պատրաստ:

Մեր խորհրդակցութիւնը վերջացաւ բարձր տրամադրութեան տակ: Ձեռք առնւած սաղմագիտական միջոցները յոյս էին ներշնչում, որ այլևս թուրքերը չէին կարող անակնկալի բերել ու կոտորել հայերին:

Նոր ընդհարումը տեղի ունեցաւ մեզ համար աւելի նպաստաւոր պայմաններում: Ժամը ցերեկայ 12 էր, երբ կռիւը սկսեց: Ես իզգիբցի Մելիքեթի հետ փոստի մօտ էի, որտեղից ծայր տւեց հրազենների տրամբոցն ու սարսափահար փախեփախը: Չոկի կաթնատունը փոստից հարիւր քայլի վրա էր: Շտապեցինք այնտեղ: Թռուցիկ լամբի տղաներն արդէն փողոցումն էին, կաթնատան առաջ եւ հրամանի էին սպասում:

Խէչօն, որ մինչեւ այդ շրջել էր քաղաքի բոլոր կայաններն ու դիրքերը եւ ժամը 11-12-ին նստած էր «Ֆրանսիա» հիւրանոցում, կանդուրալեանի\*) պատշգամբում, Աստաֆեան փողոցի վրա, հրացանաձուլիան առաջին իսկ վայրկեանից թռել էր փողոց եւ այժմ մեծ-մեծ քայլերով դնում էր Բուլվարի ուղղութեամբ: Նրան միշտ, որոշ հեռաւորութեան վրա, հետեւում էր իր թիկնապահ կարճահասակ Շահէնը: Ես տղաներին կարգադրեցի.

— Տղե՛րք ջան, դէպի Բուլվար:

Իսկ խէչօն բղաւում էր.

— Հը՛, բարամ օլասան, զարկելով դէպի՛ Մէյդան:

Կռիւը տարածւեց ամէն ուղղութեամբ: Գլուխները կորցրած, իրենց ունեցածքը թողնելով անտէր, փախչում էին հայ ու թուրք խանութպաններ, փայտավաճառներ, մանրավաճառներ, կառապաններ, ամենքը: Պայթել էր Դաշնակցութեան մատուցէրը, եւ կռուու պատրաստակամութեամբ փողոց էին թափուել պատանի աշակերտներ, երիտասարդներ, ծերեր, բոլորը սրտապնդւած փոխվրէժի դադափարով: Սկսւած իրարանցման հետ միաժամանակ ծայր տըւին դիրքային կռիւներ հայ եւ թուրք թաղերի միջեւ:

\*) Գիւղատնոն Պօղոս Կանդուրալեան, հին դաշնակցական, Երևանի կենտրոնականի անդամ, Հայաստանի Հանրապետութեան օրով Պետական Գոյների բաժնի վարիչ էր:

Դամբրբուլաղի կողմից թաթարները շարունակ ուժեղ գրոհներ էին գործում հայկական Ծնթաղի վրա եւ մերոնց շեշտակի կրակի տակ ընկնելով՝ յետ էին նահանջում: Մեր մարտիկները մինչ այդ արդէն մաքրել էին Բուլխուր, Մէյլանը, Սուբր Սարգսի փողոցը եւ օգնութեան էին դնում Ծնթաղին: Երբ ես իմ մարտիկների հետ հասայ Ծնթաղ, տեսայ որ Մկրտիչը գերբեց գերք անցնելով խրատում էր կուռղներին եւ հրահանգներ տալիս: Մեր երեւումը աւելի եւս սրտապնդեց կուռղներին, որոնց կրակի տակ թշնամին հարկազրեց փակել տներում:

Այս տաք կուռ ժամանակ մեր տղաները դրաւեցին Դամբրբուլաղի թուրք գերբերի եւ Ծնթաղի մեր գերբերի միջեւ գտնուող հանրատունը, որ բարձրութիւնից իջխում էր շրջապատի վրա: Այս գերբի գրաւումով թուրքերի շարժումը դէպի Ծնթաղ դարձաւ անկարելի:

Իմ մարտիկների մի մասը թողնելով Մկրտչի տրամադրութեան տակ՝ միւսների հետ վերադարձայ Զոկի կաթնատունը: Այնտեղ իմացայ, որ Սէջօն անցել է Փանահ խանի տան վերեւը ընկած մեր գերբերը: Տղաների հետ շտապեցի նրա մօտ: Նա տղաներին դասատրեց թոյլ գերբերում, անհրաժեշտ հրահանգները տեց եւ ինձ հետ վերադարձաւ կաթնատուն: Այստեղ Սէջօն ասաց, թէ թուրքերին լռեցնելու լաւագոյն միջոցներից մէկն էլ կը լինէր այն, որ մի խումբ շողաներ Նորքի սարով բարձրանային Դամբրբուլաղի գլուխը եւ հրացանի կրակի տակ առնէին թշնամուն: Այս միտքը սրտիս շատ մօտ եկաւ: Ես խնդրեցի, որ թոյլ տայ ինձ գնալու: Սէջօն համաձայնեց եւ իմ տրամադրութեան տակ դրեց Թիֆլիսից նոր եկած մօտ տասը սքանչելի մարտիկներ՝ Կոփեցի Կենազին, էրզրումցի Արամին, Թիֆլիսեցի Շէկ Տիգրանին, եւայլն: Սրանցից ոմանք զինւած էին ատրճանակով, մի մասն էլ բոլորովին անզէն էր: Սէջօն հրահանգը ձեռքիս գնացի ուղիղ մեր պահեստապետի մօտ եւ տղաների համար ստացայ հրացաններ հարիւրական փամփուշտներով ու փամփուշտակալներով: Զինւած մարտիկներին միացան եւ Նորքի ուժերը, որոնց մեծ մասը անզէն էր կամ միայն դաշոյն ունէր: Գիշերւայ ժամը 10ին պիտի յարձակէինք: Նորքիք լաւ ծանօթ էին ճանապարհներին եւ մեր բռնելիք գերբերին: Մեր շարժելու վայրկեանին հասաւ նաեւ Սէջօն եւ մեր շուրջը գտնւած անզէն զիւղացիներին տեսնելով՝ սրախօսեց.

— Հը՞, լ'նչ ա, պոլկ\* էք կազմել:

\*) Զօրագումը:

Եւ հրամայեց, որ լոյսը չբացուած վերադառնանք Նորք:

Ընկանք ճանապարհ: Էլ կարող էք երեւակայել, թէ ինչպէս էի կառավարում այդ խաչտարղէտ խաժամուժը: Ժամ ու կէտից յետոյ հասանք նշանակուած տեղը եւ բռնեցինք ամուր դիրքեր: Մեր դրութիւնը հիանալի էր. թիկունքը սպահովում էին լեռները. մենք իշխում էինք թուրքերի վրա, որոնք, երեւի, չէին ենթադրում, թէ այդ բարձունքներից իրենց գլխին կրակ պիտի թափուի:

Իմ բարձր դիրքից ես դիտում էի վարը տարածուած թրքական թաղը, որտեղից հրացանի ձայներ էին հասնում: Այժմ, երեւի, Մըկըրաիչը քրտնաթո՛ր՝ դիրքից դիրք է վազվզում եւ կարգադրութիւններ է անում, իսկ ես անխուփ խորհում էի, թէ ինչպէս սկսեմ: Մարտիկներից մի տասնեակ ուղարկեցի դէպի առաջ, իսկ մենք 2000-2500 քայլ հեռուից սկսեցինք որոտընդոստ համազարկը: Մեզ հետ եկած անդէն դիւզայիներն էլ «ուռա՛»ներով սրտապնդում էին մեզ: Այդ աղմուկը դիշերային խորհրդաւորութեան մէջ ահաւոր տպաւորութիւն էր թողնում, եւ զարմանալի չէ, որ Դամբըրուլաղի թուրք թաղի բոլոր ճրագները անմիջապէս մարեցին, երթեւեկութիւնը փոզոցներում դադարեց եւ յարձակումները հայերի վրա վերջ գտան: Թուրքերի սարսափը մեծ էր, մանաւանդ, այն պատճառով, որ հայկական դիրքերին մօտ գտնուող մի քանի թրքական տներ յօդս ցրնդեցին մեր սումբերից:

Մենք կրակեցինք մօտ 2000 փամփուռտ: Կասկածում եմ թէ մեր փամփուռտները շատ մարդ գլորեցին. քայց սարսափը մեծ էր: Յամենայն դէպս, մեր թիկունքային հարածը վճռական էր եւ շջմեցրեց թուրքերին:

Երբ առաւօտեան վերադարձանք քաղաք, մեր յաղթանակը այլ-եւս ակներեւ էր. հայերը ցնծութեան մէջ էին: Երեւանցիք ոյժառած՝ միաբերան գոռում էին. Զա՛րկ, Երեւան ջան, զա՛րկ:

Գիշերային այս գրոհը բոլորովին բարձրացրեց քաղաքի հայերի բարոյական կորովը, ոգեպնդեց ու բարձրացրեց նաեւ նահանգի հայութեան տրամադրութիւնը:

Միւս օրը առաւօտեան դնացի տեսներու Խէչօին: Նրա դէմքը փայլում էր ուրախութիւնից: Նա պինդ գրկեց ինձ, տաք-տաք համբուրեց ու սասց.

— Խաթաբեա՛ր, դու որ մի շարաթ կաիւ անես, Քանաքեռի ջարախանան\*) քեզ չի հերքի:

\*) Քանաքեռի գէնքի պետական պահեստ:

## II

## ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄՍ ԴՈՒՄԱՆԻ ՀԵՏ

Հակառակ Բազուի Կենտրոնական Կոմիտէի կարգադրութեան, ընկերական մի պարտականութիւն կատարելու նպատակով, 1905 թ. յունիսի վերջերին եւ Յրեւանից վերադարձայ Բազու:

Այդ ժամանակ Մարտիրոսը\*) եւ Ալեքսանդրապոլցի Մուկուչը (ՄԿՕ) բանտարկւած էին Նակաշիձէի առաջին մահափորձի պատճառով, որ անցել էր անյաջող: Պէտք է տեղի ունենար զինուորական դատ, եւ բանտարկւած ընկերները համոզւած էին, որ դատարանը մահուան պատիժ կամ յաւիտենական տաժանակիր աշխատանքի վճիռ պիտի տայ: Մարտիրոսը նամակ էր գրել Յրեւան եւ ինչդրում էր, որ ամէն կերպ աշխատենք, բանտից մինչեւ դատարան տանելը, փախցընել իրենց, իսկ եթէ այդ չյաջողւի, ումբ նետել եւ զինուոր պահակները հետ միասին իրենց էլ սպանել:

Այս նամակի մասին լուրջ խորհրդակցութիւն ունեցանք Խէչօն, Մկրտիչն ու ես, եւ Բազու մեկնելու էլ տեղի ունեցաւ նրանց զիտութեամբ եւ համաձայնութեամբ: Երեքիս կարծիքն էլ այն էր, որ Մարտիրոսի երկրորդ ցանկութիւնը պէտք էր կատարել այն դէպքում միայն, երբ դատարանը մահուան պատժի վճիռ տար, իսկ տաժանակիր աշխատանքի պարագային կարիք չկար զիմելու սպանութեան:

Իմ նորից Բազուում երեւալուց չափազանց դժգոհ էր Կենտր. Կոմիտէն, որի պատասխանատու-անդամ ընկ. Ա. Գիւլիսանդանեանը սաստիկ յանդիմանեց ինձ՝ արարքս համարելով անկարգապահութիւն եւ ինքնազլխութիւն:

— Ինչպէ՞ս կարելի է այս պայմաններում գործ անել, երբ ամէն մարդ իր ուղածն է առաջ տանում ու հրահանգներին չի ենթարկւում, դանդաղում էր նա: Իսկ մեր սիրելի Պապազան կշտամբում էր —

— Ա՛յ տղայ, դու հօ դիժ չե՞ս, ինչո՞ւ եկար, չէ՞ որ օստիկանները շան նման փնտրում են քեզ:

Ես ի՞նչ կարող էի պատասխանել աւագ ընկերներին դառն խօսքերին, մանաւանդ որ որոշւած էր երեքիս վճիռը ոչ ոքի չյայտնել:

\*) Մարտիրոս Զարուխեան, յայտնի դաշնակցական մարտիկ. սպանեց պարսկական կռիւնքում:

Ինձ մնում էր միայն քրտնել ու սպասել, թէ երբ պիտի օձիքս ազատ թողնին :

Հակառակ կրածս նախատինքներին ու յանդիմանութեան, այնուամենայնիւ ես վճռեցի չհեռանալ Բազուից, մինչեւ չկատարեմ մեր երեքի որոշումը : Եւ նոյն իսկ բանա՛ էլ զնացի այցելելու Մարտիրոսին եւ Մուկուչին : Մարտիրոսի քոյրը՝ Սաթենիկը ինձ ներկայացնելով եղբոր տեղ՝ արտօնութիւն էր ստացել, եւ նրա հետ միասին զնացինք բանա, ուր բաւական երկար խօսեցի Մարտիրոսի հետ, բացատրեցի, որ յուսահատուելու կարիք չկայ, յայտնեցի մեր երեքիս վճիռը եւ հաղորդեցի Յէջօի եւ Մկրտչի ջերմ բարեւները : Առանձնապէս պնդեցի, որ եթէ դատարանը տաժանակիր աշխատանքի վճիռ արձակէ, չպէտք է սովորի օգնութեան դիմել, նախ՝ որովհետեւ տաժանակիր աշխատանքի տեղից շատ շատերն են փախել եւ ազատուել, ուրեմն, իրենք էլ կարող են ազատուել : Երկրորդ՝ ոռուսական յեղափոխական շարժումը օր օրի վրա ծաւալւում ու լայն չափերի էր հասնում . ո՞վ դիտէ, թէ վաղը ինչ էր լինելու . արդեօք այսօրւայ հալածւողներն ու բանտարկւողները իշխանութեան տէր չպի՞տի դառնային :

Այս այցելութիւնը եւ Երեւանից բերւած որոշումն ու խորհուրդները շատ լաւ ազդեցութիւն արին բանտարկեալների վրա : Դրանից յետոյ էլ ես դեռ մի-երկու շաբաթ մնացի Բազում, երբ Երեւանից ստացուեց մի անակնկալ հեռագիր : Այդ առթիւ մտայ Պապաչայի մօտ բացատրութիւն ուզելու : Հեռագիրը կրում էր Տէր-Յովհաննիսեան ստորագրութիւնը, որ ինձ անձանօթ էր : Պապաչան մի լաւ յանդիմանելուց յետոյ, որ դեռ չեմ հեռացել Բազուից, յայտնեց, թէ հեռագրորդը Նիկոլ-Դումանն է, որ հրահանգում է անմիջապէս մեկնել Երեւան : Պապաչան իր կողմից էլ պնդեց, որ օր առաջ ճանապարհ ընկնեմ :

Ես յաջորդ օրն իսկ մեկնեցի եւ Երեւան հասնելուս պէս շտապեցի ներկայանալ Նիկոլին, որի ժամանակաւոր շտաբը գտնւում էր Յարսկայա փողոցի վրա, երրորդ թէ չորրորդ տունը Աստաֆեանից հաշւած :

Նիկոլը դեռ չէր եկել : Թէեւ Բազում ես նրան մի քանի անգամ տեսել էի, բայց հետը ծանօթ չէի : Դուրս եկայ, որ մի քիչ դրօսնեմ, երբ հեռից տեսայ նրա գալը : Անմիջապէս վերադարձայ եւ կամաց-կամաց զնում էի յետելից : Շտաբը մտնելիս նա նկատեց, որ ես էլ բարձրանում եմ սանդուխքներով : Դարձաւ ու հարցրեց .

— Ի՞նչ կայ . ո՞ւմ էք ուղում :

— Ձեր հեռագրի համաձայն եկել եմ, պատասխանեցի ես :

— Բագուի՞ց :

— Այո՛ :

Նա ներս մտաւ իր սենեակը, ուր նրան սպասում էին Գալուստ Ալոյսեանը եւ պահեստապետ Հայկօն : Նրանց հետ կէս ժամի չափ խօսելուց յետոյ ինձ էլ կանչեց ներս : Ես մտայ, բարեւեցի եւ կանգ առի սեղանի մօտ : Նիկոլը քաղաքավարութեամբ պատասխանեց բարեւիտ : Բարեւեց նաեւ Գալուստն եւ դառնալով Գուժանին՝ ասաց .

— Դէ՛հ, Նիկոլ, ես զնացի . էլ ինձ գործ չկայ այստեղ :

Ու դուրս եկաւ : Նիկոլը հրաւիրեց ինձ նստելու եւ անմիջապէս անցաւ գործի :

— Քո Բագու զնալու մասին, ասաց, թէ չօն մանրամասն զեկուցել է ինձ : Կուսակցութիւնը պէտք եղած դէպքում գիտէ իր անելիքը : — Եւ սկսեց հարցաքննել .— Ի՞նչ կրթութիւն եմ ստացել, զինւորական ծառայութեան մէջ եղե՞լ եմ եւ այլն :

Ես, եթէ չեմ սխալւում, քսան մէկ տարեկան էի : Յայտնեցի, թէ՛ աւարտել եմ Երեւանի Գիմնազիայի չորրորդ դասարանը, թէ՛ եղել եմ Ախուլքինսկի Գնդի զինավարժական բաժնում եւ Բագուի հայ — թրքական ընդհարումների պատճառով կիսատ ձգել ու փախել եմ Բագու :

— Ծխո՞ւմ էք, ընդհատեց նա, մի ծխախոտ առաջարկեց եւ ակնարկելով Նախաշիճէի ահարեկումը՝ շարունակեց .— Կուսակցութիւնը քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, այդ չի նշանակում, թէ դու հակառակ նրա Կենտրոնական Կոմիտէի հրահանգի կարող ես, կամ իրաւունք ունիս վերադառնալ այն վայրը, որտեղից քո իսկ սպահովութեան եւ իրեն յայտնի այլ պատճառներով հեռացրել է : Հայ ազատագրական պայքարը շատ մեծ է, քեայազէոլութեան վայրկեաններն անխուսափելիօրէն գեռ կը դան, հարկաւոր է անտեսել ուժերը եւ սպասել յարմար ժամանակի : Մանաւանդ դու, որ թէ Գիմնազիայում ես սովորել, թէ զինւորական Գալոցում, շատ լաւ պէտք է հասկանաս, թէ ինչ բան է կարգապահութիւնը : Գուժնում ես իմ արամադրութեան տակ . զնա՛, պէտք եղած դէպքում կը կանչեմ :

Ես լուռ, գլուխս կախ լսում էի : Մերթ տաք քրտինք էր գալիս վրաս, մերթ պաղ : Ոյժ՝ չունէի առարկելու կամ արդարանալու : Նրա պարզ, բայց կտրուկ եւ ազդող խօսքերը մխուժում էին դիտումս այլեւս երբեք չմոռացելու համար :

Ասպէս տեղի ունեցաւ իմ առաջին հանդիպումը Նիկոլ — Գուժանի հետ :

Երկու թէ երեք օր անցած նա ինձ նորից կանչեց մօտը: Կարգադրւած էր, որ Սէջօն Սարգիս Օտարաշեանի եւ Վահան Փափաղեանի (Կոմսի) հետ գնայ Նախիջեւանի շրջանը, իսկ ինձ ո՞ւր պիտի ուղարկէր, գեռ չզրտէի: Նա սպրում էր Սարգիս Օհանջանեանի սանը. այնտեղ էլ ընդունեց ինձ, բայց այս անգամ շատ աւելի սիրալիք ու մտերմական վերաբերումով: Նախ՝ ամենայն լրջութեամբ եւ մանրամասնօրէն հարց ու փորձ արաւ, թէ ինչպէ՞ս ահարեկեցի Նախաշիճէին, ապա յայտարարեց.

— Դու պիտի անցնես Ղըրխրուլաղ: Քեզի կը տամ տասը զինւոր: Շրջանը ապահով վայրերից մէկն է, մեծ վտանգ չկայ. միակ վտանգը թարաքեաման է, որ կարող է յարձակում գործել հայ գիւղերի վրա, արդէլք լինել դաշտային աշխատանքներին եւ քշել գիւղացիները անասունները: Քեզ վրա դնում եմ նաեւ մի ուրիշ պարտականութիւն, որ աւելի կարեւոր է. տեղ հասնելուդ պէս իսկոյն պիտի կազմակերպես տեղական մարտական խմբեր, նախապատուութիւն տալով ուսս զինւորական ծառայութեան մէջ գտնւածներին: Կը կազմես նաեւ մէկ կամ երկու բացառիկ խումբ Նճական հողուց եւ կը ցուցակագրես շրջանի բոլոր գէնքերն ու փամփուշտները:

Այսպէս խօսելով՝ սեղանի արկղից հանեց ուսական շտաբի հըրատարակած զինւորական քարտէյը եւ փոխելով սեղանի վրա՝ ցոյց տւեց շրջանի բոլոր հայկական ու թրքական գիւղերը, հանգամանօրէն բացատրեց նրանցից իւրաքանչիւրի զինւորական նշանակութիւնը. յատկապէս երկարօրէն կանգ առաւ քոչուր թուրքերի բռնած վայրերի վրա՝ սկսած Բէկաքըլուի բարձունքներից մինչեւ Սելիմի լեռնանցքը: Եւ ի վերջոյ, կարգադրեց.

— Վաղը կանցնես շտաբ, կը ստանաս լիազօրագիրդ եւ Ղըրխրուլաղի մի քան տէրտէրի հետ կը մեկնիս շրջանդ: Տէրտէրը մի քանի օր է ինչ այստեղ է եւ իրենց շրջանի համար խմբապետ է խնդրում:

Այս բոլորը ինձ համար չմեցնող անակնկալ էր: Ես այլ բան էի մտածում եւ բնաւ տրամադիր չէի Ղըրխրուլաղի պէս մի խաղաղ եւ մարտական տեսակէտից անհետաքրքիր շրջան գնալ: Եւ անհամարձակ դիմեցի Նիկոլին.

— Պարոն Նիկոլ, մի խնդիր ունիմ:

Նա գլուխը արագօրէն թեքեց իմ կողմը: Ես շարունակեցի:

— Դուք ինձ խումբ էք տալիս եւ ամբողջ շրջանի ղեկավար էք նշանակում. այդ իմ ուժերից վեր է. ես չեմ կարող արդարացնել ձեր յոյսերը. խնդրում եմ ինձ չուղարկէք Ղըրխրուլաղ, այլ պահէք ձեզ մօտ եւ օգտագործէք քաղաքական կոիւնքերի համար:

Նա, դէմքը մի քիչ խոփուած, սուր հայեացք նետեց վրաս եւ արտասանեց՝

— Վաղը առաւօտեան ժամը 9-ին եկէք շտաբ. պատրաստ եղէք մեկնելու Ղըրխըռուլաղ, — եւ ոսկրոտ ձեռքը պարզելով ինձ՝ աւելացրեց՝ ազատ էք, կարող էք դնալ:

Ինչ ոչինչ չէր մնում, բայց եթէ համակերպել: Հետեւեալ օրը առաւօտեան ժամը 9-ին ես արդէն շտաբումն էի: Նիկիլը յանձնեց ինձ լիազօրագիրը, կարգադրեց ստանալ խմբի ծախսերի համար հարկաւոր դրամը եւ փոմփուշտներ ու հրացաններ:

— Իսկ տղաները կը ստանաս Մկրտիչից: Երբ ամէն բան պատրաստ լինի, մեկնելուց առաջ, երեկոյան դէմ անցիր այտեղ ինձ մօտ: Այսօր ամէն բան պատրաստ պէտք է լինի, որպէսզի վաղը ճանապարհուէք:

Դումանի նշանակած ժամին երեկոյան մտայ շտաբ: Նա մանրամասնօրէն պարզեց ինձ յանձնուած շրջանին եւ խմբին վերաբերեող բոլոր կարեւոր խնդիրները եւ առանձնապէս կանգ առաւ մարտիկների ղինավարժութեան, կարգապահութեան եւ դէպի տեղական բնակչութիւնը ցոյց տրելիք վերաբերմունքի վրա:—

— Մտիւ հրահանգում եմ, ընդդէն նա, ո՛չ մի դէպքում չմասնակցել տեղական դատական եւ այլ կարգի գործերին, որքանով որ նրանք կապուած չեն ձեր ղինւորների եւ ղինւորական պարտականութիւնների հետ: Իմ ցանկութիւնն է, որ ամէն կերպ խոյս տաք տեղական ժողովրդին նեղութիւն պատճառելուց եւ ղժգոհութիւնների առիթ ստեղծելուց, մանաւանդ մատակարարման հարցերով: Այնտեղ, ուր ժողովուրդը ձեզ յօժար կամքով պարէն չի տրամադրի, դնեցէք. այդ նպատակով ձեզ դումար կը տրամադրեմ:

Այդ ժամանակ ամէն տեղ, սովորաբար, ժողովուրդն էր կերակրում մարտական խմբերին, բայց ես շատ լաւ ըմբռնում էի Դումանի մտահոգութիւնը. մի կողմից նա չէր ուզում որեւէ նեղութիւն պատճառել ժողովրդին, միւս կողմից, իր կարգադրութիւններով ուզում էր իրեն ենթակայ անհատներին ներշնչել Դաշնակցութեան զոհարերող եւ ժողովրդասէր ոգին: Նա շատ մեծ կարեւորութիւն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեան եւ զաղափարական անձնագոհութեան: Նա պահանջում էր, որ Դաշնակցականը իր կեանքով ու գործով օրինակ լինի ժողովրդին:

Բոլոր անհրաժեշտ հրահանգները տալուց յետոյ, նա կարգադրեց, որ մի ամիս վերջը վերադառնամ եւ ղեկուցում տամ կատարած աշխատանքներին եւ ինձ վստահուած շրջանի մասին:

Ղըրխրուլաղում մենք շատ քիչ ընդհարումներ ունեցանք: Մի ամսից յետոյ եւ վերադարձայ Երեւան Դումանին զեկուցում տալու համար: Ինձանից առաջ արդէն եկել էր վերեւ յիշւած քահանան՝ Տէր-Չաքարը, եւ մանրամասն պատմել շրջանի եւ իմ աշխատանքի մասին: Տէր-Չաքարը ասել էր Նիկոլին՝

— Նիկոլ, առաջ եւ խնդրում էի որ նրան մեր շրջանը չուղարկես. իբրեւ շատ ջահելի. հիմա խնդրում եմ, որ պահես մեզ մօտ եւ ուրիշ շրջան չփոխադրես:

Երբ Տէր-Չաքարից յետոյ եւ հասայ Երեւան եւ մանրամասն զեկուցում տւի Նիկոլին, առանձնապէս մատնանշելով դաշտային հսկիչ պահակների կատարած արդիւնաւէտ դերը՝ նա դո՛հ՝ հաւանութիւն տւեց իմ այս գործին եւ ասաց.

— Տեսա՞ք, այդ կէտը իմ հրահանգների մէջ չկար, մի բան էլ դեռ ասել էք արել: Դուք նորից կերթաք Ղըրխրուլաղ, ուր կը մնաք մինչեւ որ քոչուր թուրքերը վայր իջնեն լեռներից: Ապա եւ ձեզ կը կանչեմ եւ մի ուրիշ աւելի հետաքրքիր աշխատանք կը տամ:

Եւ առաջին անգամ ճաշի հրաւիրեց իր մօտ:

